ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/12» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ (ՀԲՄ)
ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

26.07.2019թ.
Ժամը 10^{00}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետի տեղակալ Հ. Մելիքյան,
Գնահատողներ՝
ՀՀ ՋՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության պետ, գնդապետ Կ. Մխիթարյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ Գ. Ուստյան,
ՀՀ ՋՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության 1-ին բաժնի պետ, գնդապետ Ա. Մկրտչյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ Գ. Գևորգյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/12» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ.Գևորգյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/12» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու, ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/12» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

(Գ.Գևորգյան)

ՀՀ ՊՆ կարիքների համար հեղուկ վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/12» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Մաքս օիլ» ՍՊԸ
2	«ՖԼԵՇ» ՍՊԸ
3	«ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ (կոնսորցիում «ՍԻՓԻԷՍ Օիլ» ՍՊԸ-ի հետ)
4	«ԳԱԶՕԻԼ» ՍՊԸ (կոնսորցիում «ԲԱՄՌԵԼ» ՍՊԸ-ի հետ)

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/12» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու, ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Գ.Գևորգյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են, բացառությամբ «Մաքս օիլ» ՍՊԸ, որի կողմից չի ներկայացվել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/12» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող Հավելված N 2-ը:
2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/12» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ «Մաքս օիլ» ՍՊԸ-ի, մասնավորապես՝ համաձայն «Մաքս օիլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված N 1-ի՝ «Մաքս օիլ» ՍՊԸ-ն ցանկություն է հայտնել մասնակցելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/12» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի 1, 2, 3, 4 և 5 չափաբաժիններին, սակայն մասնակիցը գնային առաջարկ է ներկայացրել միայն 1, 2 և 3 չափաբաժինների համար, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, 07.08.2019թ. կասեցրել է նիստը և ծանուցել «Մաքս օիլ» ՍՊԸ-ին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Սահմանված ժամկետում «Մաքս օիլ» ՍՊԸ-ն շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, և 09.08.2019թ. նիստը շարունակվել է:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Գ.Գևորգյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքին և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 4 մասնակից.

Հ/հ	Ապրանքի անվանումը	Չ/մ	Քանակը	Նախահաշվային գումարը	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների			1-ին տեղ զբաղեցնող կազմակերպության		
					անվանումները	գինը առանց ԱԱՀ	գինը Ընդհանուր	անվանումը	գինը առանց ԱԱՀ	գինը Ընդհանուր
1	բենզին, պրեմիում /Ավտոբենզին Պրեմիում (ԱԻ-95) կտրոն/	լ	160000	70400000	«ՖԼԵԵՇ» ՍՊԸ	58400000	70080000	«ՖԼԵԵՇ» ՍՊԸ	58400000	70080000
					«Մաքս օիլ» ՍՊԸ	58533333.33	70240000			
2	բենզին, ռեգուլյար /Ավտոբենզին Ռեգուլյար (ԱԻ-92)/	տ	3118	1683720000	«ՖԼԵԵՇ» ՍՊԸ	1401800833.33	1682161000	«ՖԼԵԵՇ» ՍՊԸ	1401800833.33	1682161000
					«Մաքս օիլ» ՍՊԸ	1402580333.33	1683096400			
3	բենզին, ռեգուլյար /Ավտոբենզին Ռեգուլյար (ԱԻ-92) կտրոն/	լ	1600000	672000000	«Մաքս օիլ» ՍՊԸ	557066666.67	668480000	«Մաքս օիլ» ՍՊԸ	557066666.67	668480000
					«ՖԼԵԵՇ» ՍՊԸ	560000000	672000000			
4	դիզելային վառելիք, ամառային /Ամառային դիզ.վառելանյութ/	տ	4779	2475522000	«ԳԱԶՕԻԼ» ՍՊԸ	1991246017.50	2389495221	«ԳԱԶՕԻԼ» ՍՊԸ	1991246017.50	2389495221
					«ՍԻՓԻԷՍ Օիլ» ՍՊԸ	2054970000	2465964000			
					«ՖԼԵԵՇ» ՍՊԸ	2062935000	2475522000			
5	դիզելային վառելիք, ամառային /Ամառային դիզ.վառելանյութ կտրոն/	լ	88470	38484450	«ՍԻՓԻԷՍ Օիլ» ՍՊԸ	31996650	38395980	«ՍԻՓԻԷՍ Օիլ» ՍՊԸ	31996650	38395980
					«ՖԼԵԵՇ» ՍՊԸ	32070375	38484450			

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Բանակցություններ չեն վարվել::

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/12» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին

(Գ.Գևորգյան)

4.1 09.08.2019թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/12» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել՝ 1 և 2 չափաբաժինների մասով «ՖԼԵԵՇ» ՍՊԸ-ն, 3 չափաբաժնի մասով «Մաքս օիլ» ՍՊԸ-ն, 4 չափաբաժնի մասով «ԳԱԶՕԻԼ» ՍՊԸ-ն և 5 չափաբաժնի մասով «ՍԻՓԻԷՍ Օիլ» ՍՊԸ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/12» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Գ.Գևորգյան)

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ.Գևորգյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/12» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում կողմ 4, դեմ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Հ. Մելիքյան
Գնահատող	Կ. Մխիթարյան
Գնահատող	Գ. ՈՒստյան
Գնահատող	Ա. Մկրտչյան
Գնումները համակարգող	Գ. Գևորգյան